2020 ԹՎԱԿԱՆԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Բովանդակություն

1. Ընդհանուր նկարագրություն
2. Ֆինանսական կարիքն ու պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները
3. Պակասուրդի ֆինանսավորման պարտքային գործիքակազմը
4. Կառավարության պարտքի մարումն ու սպասարկումը
5. Կառավարության պարտքը 2020 թվականի տարեվերջին

1. Ընդհանուր նկարագրություն

2020 թվականի փոխառությունների տարեկան ծրագիրը մշակվել է կառավարության պարտքի կառավարման 2020-2022թթ. ռազմավարական ծրագրի նպատակադրումներին, ուղենշային ցուցանիշներին և ՀՀ կառավարության պարտքի նվազեցման 2019-2023թթ. վերանայված ծրագրին համապատասխան, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ 2020թ. պետական բյուջեի կազմման համար կիրառված մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակները:

ՀՀ կառավարությունը 2018 թվականից անցում է կատարել նոր հարկաբյուջետային կանոնների վրա հիմնված քաղաքականության՝ նպատակ ունենալով տնտեսության խթանման և երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման գործում բարձրացնել հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը և միաժամանակ ապահովել պարտքի կայունությունը: Այդ նպատակով մշակվել և ներդրվել են հարկաբյուջետային առավել ճկուն ու համապարփակ, ՀՀ տնտեսության ներկա բնութագրիչներին համահունչ մոտեցումներ և կանոններ, որոնք դրվել են ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մշակման հիմքում:

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի հիմքում դրված հիմնական ցուցանիշները.

Ցուցանիշներ	*2020թ.*
ՀՆԱ, մլրդ դրամ	7,095.1
Իրական աճ, %	4.9
ՀՆԱ-ի դեֆլյատոր, %	3.0
Պետական բյուջեի եկամուտներ, մլրդ դրամ	1,695.0
Պետական բյուջեի ծախսեր, մլրդ դրամ	1,855.7
Պետական բյուջեի պակասուրդ, մլրդ դրամ	(160.7)
Պետական բյուջեի պակասուրդ, %-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	(2.3)
Փոխարկումների համար կիրառված ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ փոխարժեք	476.46

2. Ֆինանսական կարիքն ու պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի հիմքում դրված ցուցանիշների համաձայն՝ համախառն ֆինանսական կարիքը կկազմի 440.0 մլրդ դրամ, մասնավորապես.



Նախատեսվում է համախառն ֆինանսական կարիքի 61.0 տոկոսն ապահովել ներքին աղբյուրներից ներգրաված փոխառու միջոցների հաշվին, իսկ 39 տոկոսը՝ արտաքին փոխառությունների հաշվին: Այսպես՝ դրա իրագործման նպատակով կիրականացվի 268 մլրդ դրամի պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխում, որից մուտքը կկազմի 268.2 մլրդ դրամ, և արտաքին աղբյուրներից ներգրաված վարկերի գծով կիրականացվի 171.8 մլրդ դրամի ֆինանսավորում:

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի պակասուրդը կկազմի 160.7 մլրդ դրամ և նախատեսվում է այն ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորել 211.3 մլրդ դրամով, իսկ արտաքին աղբյուրների հաշվին՝ (50.6) մլրդ դրամով:

Պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները հետևյալն են.

Ցուցանիշներ, մլրդ դրամ	2020թ. (պետբյուջե)	2020թ. (2020 – 2022թթ. ՄԺԾԾ)
Ընդամենը պակասուրդ	**160.7**	**160.3**
այդ թվում՝		
Ներքին աղբյուրներ	**211.3**	**101.2**
որից		
Փոխառու զուտ միջոցներ	**144.1**	**89.1**
գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումից մուտքեր	268,2	220.2
գանձապետական պարտատոմսերի մարում / հետգնում	(123,2)	(130.2)
մուրհակների մարում	(0,9)	(0.9)
Ֆինանսական զուտ ակտիվներ	**67,1**	**12.1**
վարկերի և փոխատվությունների տրամադրում (զուտ)	(24,6)	(30.4)
ելքերի ֆինանսավորմանն ուղղվող << 2019 թվականի պետական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցներ	45,6	42.9
կայունացման դեպոզիտային հաշվից օգտագործում	46.5	-
այլ	(0,4)	(0.4)
Արտաքին աղբյուրներ	**(50,6)**	**59.1**
որից		
Փոխառու զուտ միջոցներ	**14,3**	**124.6**
վարկերի և փոխատվությունների ստացում	171.8	244.2
ստացված վարկերի և փոխատվությունների մարում	(110.9)	(119.6)
արտարժութային պարտատոմսերի տեղաբաշխումից մուտքեր	-	250.8
արտարժութային պարտատոմսերի մարում / հետգնում	(46.5)	(250.8)
Ֆինանսական զուտ ակտիվներ	**(64,9)**	**(65.5)**
վարկերի և փոխատվությունների տրամադրում (զուտ)	(64,2)	(64.8)
բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերում	(0,7)	(0.7)

3. Պակասուրդի ֆինանսավորման պարտքային գործիքակազմը

2020 թվականին պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին (առանց մուրհակների) կկազմի 159.3 մլրդ դրամ, ինչը կիրականացվի պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին՝ 145.0 մլրդ դրամ, արտաքին վարկերի հաշվին՝ 60.9 մլրդ դրամ, և արտարժութային պետական պարտատոմսերի հաշվին՝ (46.5) մլրդ դրամ:

Նշենք, որ կառավարության պարտքի կառավարման 2020-2022թթ. ռազմավարական ծրագրով 2020 թվականին նախատեսվում էր պետական բյուջեի պակասուրդը փոխառու միջոցների հաշվին զուտ ֆինանսավորել 215.6 մլրդ դրամի չափով, որից 90 մլրդ դրամը պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին և 125,6 մլրդ դրամը արտաքին վարկերի հաշվին: Արձանագրված տարբերությունը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- ✓ ռազմավարական ծրագրի համաձայն՝ նոր արտարժութային պետական պարտատոմսերի թողարկումը նախատեսված էր իրականացնել 2020 թվականին, որից ստացված մուտքի հաշվին կատարվելու էր 2020 թվականին մարման ենթակա պարտատոմսերի մարումը: Մինչդեռ դրանք հաջողությամբ թողարկվեցին 2019 թվականի սեպտեմբերին՝ 500 մլն ԱՄՆ դոլար ծավալով և, միաժամանակ, իրականացվեց 2020 թվականին մարման ենթակա պարտատոմսերի մասնակի հետգնում՝ 402.4 մլն ԱՄՆ դոլար ծավալով: Կատարված գործառնությունների արդյունքում ձևավորված գումարն ուղղվել է կայունացման դեպոզիտային հաշվի համալրմանը և 2020 թվականի պետական բյուջեով նախատեսվել է այն օգտագործել 2020 թվականի սեպտեմբերի 30-ին մարման ենթակա արտարժութային պետական պարտատոմսերի մարումն իրականացնելու համար: Այսպիսով՝ պակասուրդի ֆինանսավորման արտաքին աղբյուրների փոխառու զուտ միջոցներում արտացոլվել է միայն պարտատոմսերի մարման գումարը՝ 46.5 մլրդ դրամ (97.7 մլն ԱՄՆ դոլար), իսկ դրա վճարման համար աղբյուր է հանդիսանալու ներքին աղբյուրների ֆինանսական զուտ ակտիվներում նախատեսված կայունացման դեպոզիտային հաշվից նույն գումարի չափով օգտագործումը,
- ✓ հաշվի առնելով պետական պարտատոմսերի շուկայում ստեղծված բարենպաստ միջավայրը՝ փոփոխվել է պակասուրդի ֆինանսավորման կառուցվածքը: Պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին զուտ ֆինանսավորման ծավալն ավելացվել է 55 մլրդ դրամով, ինչը համահունչ է ռազմավարական ծրագրով ամրագրված նպատակադրմանը՝ ավելացնել ներքին աղբյուրների հաշվին պակասուրդի ֆինանսավորման ծավալը և տեսակարար կշիռը:

3.1. Պակասուրդի ֆինանսավորումը պետական գանձապետական պարտատոմսերով

Պետական գանձապետական պարտատոմսերով պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումն իրականացվելու է կարճաժամկետ (3, 6, 9 և 12 ամիս), միջնաժամկետ (3 և 5 տարի), երկարաժամկետ (10 և 30 տարի) և խնայողական պարտատոմսերի հաշվին:

Յուրաքանչյուր երկու ամիսն առնվազն մեկ անգամ կկազմակերպվի 52, 39, 26 և 13 շաբաթ մարման ժամկետ ունեցող պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդներ: Կարող են իրականացվել նաև պետական

գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի լրացուցիչ թողարկումներ, ընդ որում մինչև 3 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումներ կարող են իրականացվել կանխիկ հոսքերի կառավարման նպատակով, իսկ 3-12 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումներ՝ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման շրջանակներում:

2020 թվականի ապրիլի 29-ին կթողարկվեն 3 և 5 տարի մարման ժամկետայնությամբ նոր միջնաժամկետ պետական գանձապետական պարտատոմսեր: 2020 թվականի ընթացքում կտեղաբաշխվեն 2050 թվականի հոկտեմբերի 29-ին մարման ենթակա երկարաժամկետ պարտատոմսերը, որոնց թողարկումն իրականացվել է 2019 թվականի հոկտեմբերի 29-ին:

Պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդների օրացույց

Հունվար 2020							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
1			1	2	3	4	5
2	6	7	8	9	10	11	12
3	13	14	15	16	17	18	19
4	20	21	22	23	24	25	26
5	27	28	29	30	31		

Փետրվար 2020							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
5						1	2
6	3	4	5	6	7	8	9
7	10	11	12	13	14	15	16
8	17	18	19	20	21	22	23
9	24	25	26	27	28	29	

Մարտ 2020							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
9							1
10	2	3	4	5	6	7	8
11	9	10	11	12	13	14	15
12	16	17	18	19	20	21	22
13	23	24	25	26	27	28	29
14	30	31					

Ապրիլ 2020							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
14			1	2	3	4	5
15	6	7	8	9	10	11	12
16	13	14	15	16	17	18	19
17	20	21	22	23	24	25	26
18	27	28	29	30			

Մայիս 2020							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
18					1	2	3
19	4	5	6	7	8	9	10
20	11	12	13	14	15	16	17
21	18	19	20	21	22	23	24
22	25	26	27	28	29	30	31

Հունիս 2020							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
23	1	2	3	4	5	6	7
24	8	9	10	11	12	13	14
25	15	16	17	18	19	20	21
26	22	23	24	25	26	27	28
27	29	30					

Հուլիս 2020							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
27			1	2	3	4	5
28	6	7	8	9	10	11	12
29	13	14	15	16	17	18	19
30	20	21	22	23	24	25	26
31	27	28	29	30	31		

Օգոստոս 2020							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
31						1	2
32	3	4	5	6	7	8	9
33	10	11	12	13	14	15	16
34	17	18	19	20	21	22	23
35	24	25	26	27	28	29	30
36	31						

Սեպտեմբեր 2020							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
36		1	2	3	4	5	6
37	7	8	9	10	11	12	13
38	14	15	16	17	18	19	20
39	21	22	23	24	25	26	27
40	28	29	30				

Հոկտեմբեր 2020							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
40				1	2	3	4
41	5	6	7	8	9	10	11
42	12	13	14	15	16	17	18
43	19	20	21	22	23	24	25
44	26	27	28	29	30	31	

Նոյեմբեր 2020							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
44							1
45	2	3	4	5	6	7	8
46	9	10	11	12	13	14	15
47	16	17	18	19	20	21	22
48	23	24	25	26	27	28	29
49	30						

Դեկտեմբեր 2020							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
49		1	2	3	4	5	6
50	7	8	9	10	11	12	13
51	14	15	16	17	18	19	20
52	21	22	23	24	25	26	27
53	28	29	30	31			

Պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսեր
Պետական գանձապետական միջնաժամկետ պարտատոմսեր
Պետական գանձապետական երկարաժամկետ պարտատոմսեր

Աճուրդների կողմնորոշիչ ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի եռամսյակային կտրվածքով:

Յուրաքանչյուր աճուրդին տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալների (միջակայքի) և ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի աճուրդից առաջ՝ գործակալների հետ խորհրդակցելուց հետո:

2020 թվականի ընթացքում կիրականացվեն նաև պետական գանձապետական պարտատոմսերի հետգնումներ: 2020 թվականի ընթացքում պարտատոմսերի հետգնումների 70-80% կիրականացվեն մարման գրաֆիկի հարթեցման, իսկ 20-30%՝ պարտատոմսերի իրացվելիությունը խթանելու նպատակով: Որպես կանոն պետական գանձապետական պարտատոմսերի հետգնումները կիրականացվեն միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխումների օրերին: ՀՀ ֆինանսների նախարարությունը յուրաքանչյուր թողարկման պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակահատվածում այդ պարտատոմսերի հետգնում չի իրականացնի:

ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք էջում եռամսյակային կտրվածքով, յուրաքանչյուր եռամսյակից 10 օր առաջ, կհրապարակի ուղենշային համարվող պարտատոմսերի ցանկը:

3.2. Պակասուրդի ֆինանսավորումն արտաքին վարկերով

ՀՀ 2020 թվականին պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորելու համար նախատեսվում է արտաքին վարկերի գծով կատարել 171.6 մլրդ դրամի (360.2 մլն ԱՄՆ դոլար) մասհանումներ[1]: Ընդ որում մասհանումների ամբողջ ծավալը նախատեսվում է կատարել նպատակային վարկային ծրագրերի գծով, քանի որ, համաձայն 2020-2022թ. ՄԺԾԾ-ով ամրագրված քաղաքականության, միջնաժամկետ հատվածում բյուջետային աջակցության վարկեր չեն ներգրավվելու:

2020 թվականին մասհանումների 26.6%-ը կատարվելու է Ասիական Զարգացման Բանկի կողմից տրամադրված վարկերի գծով: Հաջորդ խոշոր մասնաբաժինը (23.9%) բաժին է ընկնում Համաշխարհային Բանկին (ՎԶՄԲ և ԶՄԸ): Ռուսական վարկերի տեսակարար կշիռը կկազմի 16.2%: Ըստ վարկատուների մասհանումների կառուցվածքը հետևյալն է.

[1] Արտաքին վարկերի գծով պակասուրդի ֆինանսավորման և արտաքին վարկերից մասհանումների տարբերությունը պայմանավորված է համապատասխան վարկային ծրագրերի շրջանակներում բացված հատուկ հաշիվներում առկա դրամական միջոցների մնացորդներով:



2020 թվականին նպատակային վարկային ծրագրերի գծով մասհանումների կառուցվածքում խոշորագույնը Հայկական ատոմակայանի վերականգնման ծրագիրն է՝ 31.3 մլն ԱՄՆ դոլար: Ընդհանուր առմամբ, ըստ ոլորտների մասհանումների կառուցվածքը կլինի հետևյալը.



2020 թվականին մասհանումների գերակշիռ մասը (49.7%) կկատարվի ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի գծով:





3.3. Պակասուրդի ֆինանսավորումը արտարժութային պետական պարտատոմսերով

Արտարժութային պետական պարտատոմսերի գծով նախատեսվում է իրականացնել միայն 2020 թվականի սեպտեմբերի 30-ին մարման ենթակա պարտատոմսերի մարումը՝ 46.5 մլրդ դրամ (97.7 մլն ԱՄՆ դոլար), որի համար հիմնականում կօգտագործվի 2019 թվականին արտարժութային պարտատոմսերի գծով կատարված գործառնությունների արդյունքում ձևավորված միջոցները:

4. Կառավարության պարտքի մարումը և սպասարկումը

2020 թվականին կառավարության պարտքի մարման և սպասարկման համար կպահանջվի 448.7 մլրդ դրամ, որից 280.6 մլրդ դրամը կկազմեն պարտքի գծով մարումները, իսկ 168.0 մլրդ դրամը՝ տոկոսավճարները:

մլրդ դրամ	*Մարում*	*Սպասարկում*	***Ընդամենը***
Պետական գանձապետական պարտատոմսեր	123.2	85.5	**208.7**
Արտարժութային պետական պարտատոմսեր	46.5	29.2	**75.8**
Արտաքին վարկեր	110.9	53.3	**164.2**
Ընդամենը	**280.6**	**168.0**	**448.7**



ՀՀ կառավարության արտարժութային պարտքի սպասարկման և մարման համար նախատեսված միջոցները փոխարկվել են ՀՀ դրամի հիմք ընդունելով 2019թ. նոյեմբերի 1-ի դրությամբ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքները և ծրագրավորվել են այն ենթադրությամբ, որ ԱՄՆ դոլարի 6-ամսյա LIBOR-ի դրույքաչափը 2020 թվականին միջին հաշվով կկազմի 2.5%, իսկ 6-ամսյա EURIBOR-ը՝ չի գերազանցի զրոյական մակարդակը:

Պետական գանձապետական պարտատոմսերի մարման համար նախատեսված 123.2 մլրդ դրամի մեջ 26 մլրդ դրամը կազմում է պարտատոմսերի հետգնումների համար ծրագրավորված գումարը:

Արտաքին վարկերի մարման և սպասարկման գծով նախատեսվում է վճարել 164.2 մլրդ դրամ (344.66 մլն ԱՄՆ դոլար): Նախատեսվող վճարումների կառուցվածքն ըստ վարկատուների հետևյալն է.

մլն ԱՄՆ դոլար	տոկոսավճար	մարում	ընդամենը
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ	27.8	6.7	34.6
Զարգացման Միջազգային Ընկերակցություն	23.2	66.2	89.4
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	0.7	4.1	4.8
Եվրոպական Ներդրումային Բանկ	2.2	2.1	4.3
Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամ	0.6	2.7	3.2
ՕՊԵԿ-ի Միջազգային Զարգացման Հիմնադրամ	2.2	4.2	6.4
Ասիական Զարգացման Բանկ	22.3	34.7	57.0
Եվրամիություն	2.5	-	2.5
Արժույթի Միջազգային Հիմնադրամ	-	28.9	28.9
Եվրասիական Զարգացման Բանկ	6.8	0.1	6.8
Գերմանիա (ՎՎԲ)	5.3	18.5	23.8
Ռուսաստանի Դաշնություն	13.5	48.4	61.9
Ֆրանսիա	1.8	0.5	2.3
ԱՄՆ	0.3	1.8	2.1
Ճապոնիա	2.0	10.7	12.7
Աբու-Դաբիի Զարգացման Հիմնադրամ	0.2	0.6	0.8
Չինաստանի Արտահանման-Ներմուծման Բանկ	0.5	0.8	1.2
ԿԲՍ Բանկ (Բելգիա)	0.0	0.6	0.6
Ռայֆայզն Բանկ (Ավստրիա)	0.1	1.0	1.0
Էռստե Բանկ (Ավստրիա)	0.1	0.2	0.4
Ընդամենը	**111.9**	**232.8**	**344.7**

Արտարժութային պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերը 2020 թվականին կկազմեն 159.1 մլն ԱՄՆ դոլար, որից 61.4 մլն ԱՄՆ դոլարը կազմում են շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի գծով արժեկտրոնային վճարումներն ու 97.7 մլն ԱՄՆ դոլարը՝ 2020թ. մարման ենթակա պարտատոմսերի գումարը:

5. Կառավարության պարտքը 2020 թվականի տարեվերջին

ՀՀ 2020թ. պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումների համաձայն՝ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը կկազմի 3,419 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 48.2 տոկոսը և 2019 թվականի տարեվերջի համեմատությամբ ՀՆԱ-ի նկատմամբ կնվազի 1.4 տոկոսային կետով: Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նշված կանխատեսումները տարբերվում են Հայաստանի Հանրապետության 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում ներառված ՀՀ կառավարոիթյան պարտքի նվազեցման 2019-2023թթ. վերանայված ծրագրով սահմանված ցուցանիշներից՝ պայմանավորված հիմնականում կանխատեսումներում կիրառված մակրոտնտեսական շրջանակի և փոխարժեքների տարբերություններով, ինչպես նաև կառավարության պարտքի գծով կատարված գործառնություններով:

	31.12.2018թ.	31.12.2019թ.	31.12.2020թ.
ՀՀ կառավարության պարտք, մլրդ դրամ	3,083	3,257	3,419
ՀՀ կառավարության պարտք, մլն ԱՄՆ դոլար	6,372	6,836	7,177
ՀՀ կառավարության պարտք, % ՀՆԱ-ի մեջ	51.3	49.6	48.2

Հաշվի առնելով ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումները և պարտքի գծով ծրագրավորված գործառնությունները, ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2020-2022 թվականների ռազմավարական ծրագրով ամրագրված ուղենշային ցուցանիշները 2020թ. տարեվերջի դրությամբ կկազմեն.

	Ուղենիշ	2020թ. (կանխ.)
Վերաֆինանսավորման ռիսկ		
Մինչև մարում միջին ժամկետը	8 – 11 տարի	9 տարի
Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին)	առավելագույնը 20%	8.9%
Տոկոսադրույքի ռիսկ		
Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 80%	82.0%
Փոխարժեքի ռիսկ		
Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 20%	25.6%
ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 20%	24.1%

2020 թվականին կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույքը կկազմի 5.2%: Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը (տոկոսավճարներ) կկազմեն ՀՆԱ-ի 2.4%-ը:

	2018թ.	*2019թ.*	*2020թ.*
Կառավարության պարտքի սպասարկում (տոկոսավճար)			
մլրդ դրամ	139.0	157.6	168.0
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	2.3	2.4	2.4
Կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույք, %	5.0	5.0	5.2

Նախատեսվում է 2020 թվականին ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ավելացնել ՀՀ դրամով տեղաբաշխված պետական գանձապետական պարտատոմսերի կշիռը, որն ըստ կանխատեսումների կկազմի 24.1%: Կառավարության պարտքը կունենա հետևյալ կառուցվածքը.

	31.12.2018թ.	31.12.2019թ.	31.12.2020թ.
Կառուցվածքն ըստ ռեզիդենտության, մլրդ դրամ*			
ներքին պարտք	671	736	875
արտաքին պարտք	2,412	2,521	2,544
Կառուցվածքն ըստ գործիքակազմի, մլրդ դրամ			
արտաքին վարկեր և փոխառություններ	2,003	2,050	2,114
պետական գանձապետական պարտատոմսեր	588	681	826
արտարժութային պետական պարտատոմսեր	*484*	*523*	*476*
արտաքին երաշխիքներ	4	4	4
ներքին երաշխիքներ	4	-	-
Արժութային կառուցվածքը, մլրդ դրամ			
ՀՀ դրամով ներգրավված պարտք	588	681	826
արտարժույթով ներգրավված պարտք	2,495	2,576	2,594
Կառուցվածքն ըստ տոկոսադրույքի տեսակի, մլրդ դրամ			
լողացող տոկոսադրույքով	463	531	615
ֆիքսված տոկոսադրույքով	2,620	2,726	2,804

** 2019 և 2020 թվականների համար պետական գանձապետական և արտարժութային պարտատոմսերի գծով պարտքի մնացորդը բաշխվել է ըստ ռեզիդենտության հիմք ընդունելով 2019թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ փաստացի ձևավորված տեսակարար կշիռները:*









2020 թվականի տարեվերջի դրությամբ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի 40.4%-ը բաժին կընկնի Համաշխարհային Բանկին (Զարգացման Միջազգային Ընկերակցություն ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ): Կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների կլինի հետևյալը.



2020 թվականի տարեվերջի դրությամբ կառավարության պարտքի մարման ժամանակացույցը սփռված կլինի մինչև 2054 թվականը և կունենա հետևյալ տեսքը.